ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԲԱՆԱԿԻ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ

Արարատ Յակոբեան
Պատմական գիտութիւնների թեկնածու, դոցենտ

Հայաստանի Առաջին Հանրապետութեան կառավարութիւնն ու խորհրդարանը առանձնայատուկ ուշադրութիւն էին դարձնում բանակին: Հանրապետութեան ամավարկային յատկացումների ամենամեծ յօդուածը, անտարակոյս, ռազմական ծախսերն էին: Երբեմն զինուորական նախարարութեան անունով վարկեր էին բացում առանց նախահաշիւների: Այսպէս, օրինակ, 1919 թ. Սեպտեմբերի 6ի օրէնքով, զինուորական նախարարութեանը նախահաշուից դուրս 11,7 մլն. ռուբլի վարկ բացուեց՝ զօրքի համար ամերիկացիներից կօշիկներ գնելու համար:[1]

Անգլիացիներից 600 ջորի, 150 սայլ եւ զինուորական հանդերձանք գնելու համար խորհրդարանի 1919 թ. Օգոստոսի 30ի օրէնքով՝ զօրական նախարարութեանը բաց թողնուեց 12 մլն. ռուբլի[2]: Փոքր ուշ բանակի պարենաւորման եւ բանող ուժի կերակրման համար նախարարութեանը յատկացուեց 9,3 մլն. ռուբլի[3]: Արդէն 1920 թ. գարնանը բանակի շտեմարային կարիքների համար տրուեց 85,4 մլն. ռուբլու վարկ[4]: 1920 թ. Ապրիլին զօրական նախարարութեան յօդուածով (հաշուեհամարով) բաց թողնուեց 35,6 մլն. ռուբլու վարկ[5]: Նոյն ամսին նախարարների խորհրդի *արտակարգ քաղաքական ծախսերի համար* (այսպէս է հիմնաւորուած օրէնքում) բացւում է շուրջ 40 մլն. ռուբլու վարկ:[6]

Դրամական յատկացումներ էին կատարւում ոչ միայն բանակի կերակրման ու հանդերձաւորման, այլեւ, դրսից կախում չունենալու նպատակով, սեփական ռազմամթերք արտադրելու ուղղութեամբ: Այսպէս, 1919 թ. Սեպտեմբերի 16ի օրէնքով, մարտական գնդակներ պատրաստելու եւ փամփուշտներ լցնելու արհեստանոց հիմնելու համար բացուեց 6 մլն. ռուբլու վարկ[7]: Իսկ մէկ այլ՝ Հոկտեմբերի 3ի օրէնքով, Ալեքսանդրապոլի հրանօթային արհեստանոցների կազմակերպման համար, կառավարութեան խնդրանքով խորհրդարանը որոշեց յատկացնել 2,172 հազար ռուբլի:[8]

Տեղեկացնենք, որ բանակի ու հայրենիքի զօրացմանը ուղղուած ռազմապաշտպանական այդ յատկացումներին դէմ է եղել խորհրդարանական ընդդիմութիւնը: Այսպէս, էսէռական խմբակցութիւնը, որպէս կանոն, ձեռնպահ է մնացել եւ չի մասնակցել քուէարկութիւններին[9]: Եթէ, ասենք, հայոց բանակին ռազմական վարկեր տրամադրելու հարցում թուրք խմբակցութիւնը չէր ներկայանում նիստին կամ դէմ էր քուէարկում, դա ինքնին հասկանալի է, իսկ ի՞նչ անուն տալ ինտերնացիոնալիստ հայ էսէռների խմբակցութեան նման վարքագծին:

Դրամի աղէտալի կշռոյթով արժեզրկման պայմաններում արդէն 1920 թ. երկրորդ կիսամեակում ռազմական նախարարութեան գլխաւոր համբարակային (ամբարող) վարչութեան համար հաստատուած նախահաշիւը կազմել էր շուրջ 2,4 մլրդ ռուբլու վարկ:[10]

Հանրապետութեան զինուած ուժերին խորհրդարանական յատկացումներից զատ, օգնութիւն էին ցոյց տալիս նաեւ առանձին կուսակցութիւններ ու անհատ բարերարներ: Կուսակցական խողովակներով կամ անհատական կարգով հանրապետութեան պաշտպանութեան նպատակներին աւելի յաճախ օգնութիւն էին ցուցաբերում Հայ Սահմանադիր Ռամկավարների արտասահմանեան կազմակերպութիւնները: 1919 թ. Փետրուարին, Պօղոս Նուբար փաշայի կողմից հայկական զօրքի կարիքները հոգալու նպատակով, ստացուել էր 502,270 ֆրանկ[11]: Միաժամանակ, սեփական միջոցներով գնել էր մէկ ինքնաթիռ[12]: 1920 թ. Մայիսին Հայաստանի անկախութեան երկրորդ տարեդարձի առթիւ

1.- Հ.Հ. Պ.Կ.Պ.Ա., ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 41, «Հ.Հ. օրէնքների հաւաքածու 1919 թ.», էջ 4:

2.- Հ.Հ. Պ.Կ.Պ.Ա., ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 41:

3.- Նոյն տեղում- թ. 72:

4.- «Հ.Հ. օրէնքների հաւաքածու 1920 թ.», էջ 52-53:

5.- Հ.Հ. Պ.Կ.Պ.Ա., ֆ. 202, ց. 1, գ. 333, թ. 159:

6.- Նոյն տեղում, թ. 160:

7.- Նոյն տեղում, թ. 9:

8.- «Հ.Հ. օրէնքների հաւաքացու 1919 թ.», էջ 22-23:

9.- «Սոցիալիստ Յեղափոխական», 9 Հոկտեմբերի, 1919 թ.:

10.- Հ.Հ. Պ.Կ.Պ.Ա., ֆ. 198, ց. 1, գ. 58, թ. 68:

11.- Հ.Հ. Պ.Կ.Պ.Ա., ֆ. 199, ց. 1, գ. 14, թ. 31:

12.- Մ. Լ. Կարապետեան, «Հայաստանի Հանրապետութեան բանակը» 1918-1920, Ե., 1996, էջ 56:

եգիպտահայ մեծահարուստ Ղարիբ Գառնուկը Հայաստանին էր նուիրել ինքնաթիռ[13]: Չնայած Ս. Ռամկավար Կուսակցութիւնը քննադատում էր դաշնակցական կառավարութեանը եւ շատ խնդիրներում համաձայն չէր նրա վարած քաղաքականութեանը, սակայն դա ամենեւին չէր խանգարում, որպէսզի անհրաժեշտութեան դէպքում օգնէր ու աջակցէր հայոց պետականութեան ամրակայմանը: Պէտք է ասել, որ հիմնականում այդպէս էին մտածում եւ գործում հայ ազգային բոլոր կուսակցութիւնները:

Սահմանադիր Ռամկավար Կուսակցութեան Եգիպտոսի շրջանային կենտրոնական խորհուրդը 1920 թ. ամրանը որոշեց 50 մարտական ինքնաթիռ նուիրաբերել Հայաստանին, որից 10ը պիտի յատկացուէր Կիլիկիայի ինքնապաշտպանութեանը, իսկ 40ը՝ Հայաստանի Հանրապետութեանը[14]: Եգիպտահայ ռամկավարները դեռ մէկ տարի առաջ՝ 1919 թ. կէսերին, Պ. Նուբար փաշայի անձնական միջնորդութեամբ, նման հարցով դիմել էին Եգիպտոսի անգլիական զինուորական իշխանութեան ներկայացուցիչներին՝ իրենց սեփական միջոցներով նման խմբաքանակով ինքնաթիռներ գնելու համար[15]: Ս. Ռամկավար Կուսակցութեան Եգիպտոսի շրջանային մարմինը, 1920 թ. Ապրիլ-Օգոստոս ամիսների ընթացքում բանակցելով անգլիական զինուորական իշխանութիւնների հետ եւ ստանալով անգլիական կառավարութեան արտօնագիրը՝ զեղչ գներով (մէկ ինքնաթիռը՝ 100 եգիպտական ոսկի) գնում են 20 ինքնաթիռ[16]:

Միաժամանակ, ծրագրում է պատրաստել 50 արհեստավարժ օդաչու: Այս խնդիրն էլ իրենց վրայ են վերցնում Ս. Ռամկավարների Ամերիկայի եւ Իզմիրի շրջանակները[17]: Արդէն 1920 թ. Օգոստոսին այդ ինքնաթիռների գնումը աւարտուել էր եւ մնում էր դրանց փոխադրումը հայրենիք: Յիշեալ ինքնաթիռները պիտի անուանուէին դրանց գնող-նուիրատուների անուններով, իսկ ամբողջ խմբաքանակը՝ «Հայ ռամկավարների տորմիղ»[18]:

Բայց մինչ Ս. Ռամկավարները այս հայրենասիրական խնդիրներով էին զբաղուած, Հայաստանի ճակատագիրը փոխւում է: Այն բանից յետոյ, երբ հայ-թուրքական պատերազմից յետոյ Հայաստանը խորհրդայնացւում է, անգլիական իշխանութիւններն այլեւս թոյլ չեն տալիս, որպէսզի գնուած ինքնաթիռները ուղարկուեն Հայաստան:

Մեզանում տարածուած է այն մտայնութիւնը, թէ Հ.Հ. բարձրագոյն իշխանութիւնները՝ խորհրդարանը եւ կառավարութիւնը, բաւարար ուշադրութիւն ու հետեւողականութիւն չեն ցուցաբերել Արցախի հարցում եւ որ, իբր, դրա համար էլ նա վերջին հաշուով յայտնուեց Ադրբեջանի վարչատարածքային սահմաններում:

Պէտք է ասել, որքան էլ ծանր էր Հայաստանի ընկերային-տնտեսական ու քաղաքական վիճակը, հանրապետութեան կառավարութիւնը անում էր հնարատրին ամէն ինչ տէր ու պաշտպան կանգնելու արցախահայութեան արդար դատին՝ «Ղարաբաղը համարելով անբաժանելի մասը Միացեալ եւ Անկախ Հայաստանի Հանրապետութեան»:[19]

Նոյն կերպ Արցախին իր համակրողման աջակցութիւնն է ցոյց տուել Հայաստանի խորհրդարանը: Նրա նիստերում պարբերաբար քննարկումների նիւթ է դարձել Արցախի խնդիրը: Արցախին օգնելու նպատակով, խորհրդարանի հաւանութեամբ, 1919 թ. հիմնւում է հիմնադրամ՝ 8 մլն. ռուբլու չափով: Այդ գումարից 1,5 միլիոնը յատկացւում է «Ղարաբաղի զօրամաս» կազմակերպելու համար: Նորակազմ զօրամասը բաղկացած էր մէկ հետեւակ գումարտակից, 2 լեռնային հրանօթից եւ 54 հեծեալ հետախոյզներից:[20]

Համանման օգնութիւն եւ այլ ծախսեր կազմակերպելու միջոցով շուտով Արցախի կարիքների համար յատկացուած 8 մլն. ռուբլու հիմնադրամը սպառւում է, եւ կառավարութիւնը հարց է բարձրացնում կրկին 8 մլն. ռուբլու վարկ բացելու մասին:[21]

Արցախին օգնութիւն էր ցոյց տրւում ոչ միայն պետական-կառավարական մակարդակով, այլ նաեւ Հ.Յ.Դ. կուսակցական խողովակով: Այսպէս, օրինակ, 1919 թ. ամրանը Հ.Յ.Դ. Բաքուի Կենտրոնական Կոմիտէն Ղարաբաղի ազգային խորհրդին էր տրամադրել (փոխանցել) 1,06 մլն. ռուբլու օժանդակութիւն[22]: Այնպէս որ, Հայաստանի խորհրդարանը, կառավարութիւնը, ինչպէս նաեւ Հ.Յ.Դ. ն, որպէս կառավարող կուսակցութիւն, Արցախեան խնդրի կրաւորական դիտողի դերում չեն գտնուել, այլ հնարաւոր բոլոր միջոցներով աշխատել են այն միաւորուած տեսնել Հ.Հ. կազմում:

Հարկ է նշել, որ մինչեւ 1920 թ. գարունը Հ.Հ. կառավարութիւնը Արցախի եւ Զանգեզուրի հարցում առաջնորդւում էր արտաքին քաղա-

---

13.- Հ.Հ. Պ.Կ.Պ.Ա., ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 154:

14.- «Ժողովրդի Ձայն», Կ. Պոլիս, 15 Օգոստոսի, 1920 թ.:

15.- «Հայաստանի Ձայն», 18 Սեպտեմբերի, 1920 թ.:

16.- Մ. Գ. Ճիզմէճեան, «Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925», Ֆրեզնօ, 1930, էջ 412:

17.- Նոյն տեղում:

18.- «Հայաստանի Ձայն», 14 Սեպտեմբերի, 1920 թ.:

19.- Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», հ. Է, Լոս Անջելես, 1952, էջ 205:

20.- Հ.Հ. Պ.Կ.Պ.Ա., ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 132:

21.- Հ.Հ. Պ.Կ.Պ.Ա., ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 15:

22.- Հ.Հ. Պ.Կ.Պ.Ա., ֆ. 199, ց. 1, գ. 76, թ. 10:

քականութեան այն կուրսով, որ շուտով Փարիզի խաղաղութեան կոնֆերանսը արդարութեամբ կը լուծի նաեւ հայ-ադրբեջանական այս կընճիռը, ուստի եւ ձեռնպահ է մնում հիմնահարցի լուծման ուժային մեթոդներից: Նոյն կերպ, արցախահայութիւնը եւս սպասում էր խաղաղարար կոնֆերանսի արդար վճռին: Բայց երբ պարզում է, որ Ադրբեջանը ծրագրել է Ղարաբաղը եւ Զանգեզուրը հայաթափ ու բնաջինջ անելու միջոցով գրաւել ու ենթարկել իրեն, Հայաստանը եւս, բնականաբար, փոխում է իր դիրքորոշումը: Տեղի հայութիւնը դիմում է ինքնապաշտպանութեան: Ճակատագրական դէպքեր են կատարում 1920 թ. Մարտի վերջերին եւ մասնաւորապէս՝ Մարտի 22-23ի գիշերը:

Արցախ-Զանգեզուրում ծաւալուող դէպքերի քննութեանն էր ամբողջովին նուիրուած խորհրդարանի 1920 թ. Ապրիլի 3ի թիւ 78րդ նիստը: Նիստում ընդարձակ ու հանգամանալից զեկուցումով հանդէս եկաւ վարչապետ եւ արտաքին գործերի նախարար Ալ. Խատիսեանը:[23]

Ադրբեջանական իշխանութիւնները, մեղադրելով արցախահայերին ապստամբութիւն նախապատրաստելու մէջ, որոշում են կանոնաւոր զօրքերով յարձակուել տեղի հայութեան վրայ, կոտորել կամ արտաքսել երկրամասից: Մարտի վերջերին տեղի են ունենում Շուշիի եւ այլ բնակավայրերի հայութեան կոտորածներ: Վարչապետն իր զեկուցման մէջ բացայայտում է Ադրբեջանի կառավարութեան նենգ դաւերը եւ հայաջինջ ծրագրերը: Մարտի վերջին տեղի ունեցած դէպքերից յետոյ, խորհրդարանի հաւանութեամբ, Հայաստանի կառավարութիւնը հարկադրուած փոխում է իր վերաբերմունքը հիմնահարցի լուծման խաղաղասիրական ուղուց:

Զօր. Նազարբէկեան, Ալ. Խատիսեան, Զօր. Յովսէփեան եւ Զօր. Դանիէլ բէգ-Փիրումեան (Կարս)

Կառավարութեան յանձնարարութեամբ տարածաշրջանի հայութեանը օգնութեան է հասնում հայկական զորամասը՝ Դրոյի հրամանատարութեամբ: Տեղում հայ ժողովրդի պայքարը ազատութեան եւ անկախութեան համար ղեկավարում էր Ղարաբաղի Հայ Ազգային Խորհուրդը, որը 1918 թ. Մայիսից մինչեւ 1920 թ. Մայիսը, իր հրաւիրած տասը համագումարներում եւ դրանից յետոյ էլ, չի ընդունել եւ չի ճանաչել Ադրբեջանի իշխանութիւնը:[24]

Համատեղ ջանքերի շնորհիւ Լեռնային Ղարաբաղը գործնականում միացում է Հայաստանի Հանրապետութեանը:

Մէկ ամիս անց՝ Ապրիլի վերջերին, Ադրբեջանում եւ դրա հետ կապուած Արցախի ու Զանգեզուրի հիմնահարցի շուրջ ծաւալուեցին շատ աւելի մեծ իրադարձութիւններ: Այս կապակցութեամբ 1920 թ. Մայիսի 3ին հրաւիրուեց խորհրդարանի արտահերթ նիստ: Նիստում լսուեց ու քննարկուեց արտաքին գործոց նախարար Համօ Օհանջանեանի հաղորդումը վերջին շաբաթուայ ընթացքում Անդրկովկասեան տարածաշրջանում եւ յատկապէս Ադրբեջանում կատարուած քաղաքական դէպքերի մասին, որոնք ուղղակիօրէն առընչւում էին Հայաստանի հետագայ ճակատագրին: Այն ժամանակ, երբ ադրբեջանական 10 հազար կանոնաւոր եւ նոյնքան էլ կամաւոր զօրքեր ուղարկուել էին Ղարաբաղ եւ որոնք զբաղուած էին տեղի բնակչութեան կոտորածով, միեւնոյն ժամանակ Ադրբեջանի հիւսիսային սահմանին յայտնուած 11րդ Կարմիր Բանակը, քեմալական Թուրքիայի գիտութեամբ եւ Ադրբեջանի խորհրդարանի համաձայնութեամբ, Ապրիլի 28ին մուտք գործեց Բաքու եւ Ադրբեջանը յայտարարեց խորհրդային:

Այս բաւշեայ յեղաշրջման նպատակն էր Կարմիր Բանակի ուժերի միջոցով լուծել մուսաւաթների ծրագիրը՝ գրաւել եւ Ադրբեջանին միացնել հայկական տարածքները (Ղարաբաղը, Զանգեզուրը, Շարուր-Նախիջեւանը)՝ դրանով իսկ «լուծել իր ազգային խնդիրները»: Խորհրդային Ռուսաստանն էլ իր հերթին յոյսեր էր փայփայում, համաշխարհային յեղափոխութեան կարգախօսով, ապահովել Հայաստանի վրայով Խ. Ռուսաստանի եւ «Կարմիր Ադրբեջան»ի ցամաքային կապը իրեն «յեղափոխական յայտարարած քեմալական Թուրքիայի հետ՝

23.- Այդ մասին հանգամանալից տե՛ս «Առերեսում», 1995, թիւ 14, էջ 4-5:

24.- Լ. Ա. Խուրշուդեան, «Ճշմարտութիւնը՝ պատմագիտութեան միակ չափանիշ», Ե., 1989, էջ 9-25 (ռուս.):

Անտանտի դէմ համատեղ պայքարելու ու համաշխարհային յեղափոխութեան կրակը ամբողջ Արեւելքի մուսուլմանական երկրները տարածելու համար»:

Ի կատարումն այդ ծրագրի՝ Ադրբեջանի խորհրդայնացումից տառացիօրէն երկու օր անց, Ապրիլի 30ին, ստացուեց Ադրբեջանի խորհրդային հանրապետութեան արտաքին գործոց կոմիսարի պաշտօնակատար Հուսէյնովի վերջնագիրը՝ ուղղուած Հայաստանի կառավարութեանը: Վերջնագրի պատասխանի համար տրւում է երեք օր ժամանակ»:[25]

Վերջնագրում Նախիջեւանի անունը չի յիշատակուած այն պարզ պատճառաբանութեամբ, որ սկսած 1919 թ. կէսերից Նախիջեւանը չէր ենթարկւում Հ.Հ.ին, ուստի եւ նրանք Նախիջեւանի հարցը գործնականում համարում էին լուծուած:

Յաջորդ օրը՝ Մայիսի 1ին, Հուսէյնովի վերջնագրից մի քանի ժամ յետոյ, ստացուեց մէկ այլ վերջնագիր՝ Կովկասեան ռազմաճակատի Ռազմայեղափոխական Խորհրդի նախագահ Օրջոնիկիձէի, ինչպէս նաեւ՝ Կիրովի, Մեխանոշինի եւ Լեւանդովսկու ստորագրութեամբ: Այնտեղ նշուած է.- «Ռ.Ս.Ֆ.Խ. հանրապետութեան անունից առաջարկում եմ Հայաստանի կառավարութեանը անմիջապէս դադարեցնել պատերազմական բոլոր գործողութիւնները խորհրդային Ադրբեջանում եւ դուրս բերել իր զօրքերը նրա սահմաններից: Այդ պէտք է կատարուի 24 ժամուայ ընթացքում այս առաջարկութիւնն ընդունելուց յետոյ: Այս առաջարկութեան չիրականացումը կ՚ընդունուի Ռ.Ս.Ֆ.Խ. հանրապետութեան կողմից իբրեւ պատճառ պատերազմական գործողութիւնների, իսկ ամբողջ պատասխանատուութիւնն այս հարցում կ՚ընկնի Հայաստանի կառավարութեան վրայ»:[26]

Ի դէպ, նշենք, որ Հ.Հ.ին ուղղուած այս երկու վերջնագրերի ստուգութեանը այդ օրերին չէին հաւատում մայիսեան ապստամբութեանը նախապատրաստուող հայ բոլշեւիկները եւ դա համարում էին Դաշնակցութեան հնարած սադրանք:[27]

Ադրբեջանի Յեղկոմի վերջնագիրը եւ Կարմիր Բանակի առաջխաղացումը դէպի Արցախ որակւում էր որպէս դաշնակցական կառավարութեան հնարած հակայեղափոխական սադրանք եւ ստայօդ յերիւրանք Խորհրդային Ադրբեջանի, Կարմիր Բանակի եւ բոլշեւիկների հասցէին:[28]

Խորհրդարանի արտահերթ նիստում, իր հաղորդման ընթացքում նախարար Հ. Օհանջանեանը պատգամաւորներին տեղեակ պահեց այդ վերջնագրերի ու այլ փաստաթղթերի մասին: Այնուհետեւ, արտգործնախարարը տեղեկացնում է, որ Հայաստանի կառավարութիւնը, հերքելով վերջնագրերում պարունակուած մեղադրանքները, ուղղամիտ եւ փաստարկուած կերպով պատասխանել է դրանց: Աւելի՛ն, համապատասխան հեռագրեր են ուղարկուել Լենինին եւ Չիչերինին:[29]

Հ. Օհանջանեանը առաջարկում էր վերջնագիր ներկայացնող կողմին՝ դադարեցնել բոլոր ռազմական գործողութիւնները եւ սահմանների վերջնական որոշման ու դրացի հանրապետութիւնների միջեւ բնականոն յարաբերութիւններ հաստատելու համար Հայաստանի կառավարութեան հետ բանակցութիւններ սկսել:[30]

Խորհրդարանը քննարկում է արտգործնախարարի զեկուցումը: Տեղի է ունենում մտքերի փոխանակում: Ելոյթներ են ունենում Հ.Յ.Դ. խմբակցութեան անդամներ Ս. Թորոսեանը, Սեպուհը, Ա. Շիրինեանը, Գ. Բալայեանը, Ա. Յովհաննիսեանը, Հ. Բուդաղեանը: Նրանք հաւանութիւն են տալիս կառավարութեան ձեռնարկած քայլերին ու վարած քաղաքականութեանը:

Քննարկումների ժամանակ բացայայտ հակակառավարական դիրք է գրաւում էսէռական խմբակցութիւնը: Այս խմբակցութեան անդամներ Լ. Թումանեանը, Ա. Խոնդկարեանը, Վ. Մինախորեանը, գոտեպնդուելով Կարմիր Բանակի մուտքից եւ Ադրբեջանի խորհրդայնացումից, գտնում էին, որ այժմ հերթը հասել է Հայաստանի «Մուսաւաթին»՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեանը, որպէսզի հեռանայ ասպարէզից եւ Հայաստանը խորհրդայնանայ:[31]

Այս կապակցութեամբ ռամկավար գործիչ Արտակ Դարբինեանը իր յուշերում[32] գրում էր, որ Մայիսի 3ի խորհրդարանի արտակարգ նիստում քննում էր խորհրդայնացուած Ադրբեջանի վերջնագիրը՝ ուղղուած Հայաստանի կառավարութեանը՝ Ղարաբաղը եւ Զանգեզուրը մաքրելու մասին. սոցիալիստ-յեղափոխականները, ողջունելով ռուսական յեղափոխական բանակի մուտքը Ան-

---

25.- «Հայաստանի պառլամենտի 1920 թ. Մայիսի 3ի արտակարգ նիստը», Ե., 1920, էջ 6, Հ.Հ. Պ.Կ.Պ.Ա., ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 206:

«Բանուորի Ձայն», Թիֆլիս, 9 Մայիսի, 1920:

26.- «Հայաստանի պառլամենտի Մայիսի 3ի արտակարգ նիստը», Ե., 1920, էջ 6-7: «Բանուորի Ձայն», 9 Մայիսի, 1920:

27.- Հ.Հ. Պ.Կ.Պ.Ա., ֆ. 199, ց. 1, գ. 138, թ. 75:

28.- Ա. Գ. Յովհաննիսեան, «Հայաստանի յեղափոխութեան Յուլիսն ու Հոկտեմբերը», Ե., 1923, էջ 14, 20, 29-30:

Հ. Ս. Կարապետեան, «Մայիսեան ապստամբութիւնը Հայաստանում (1920)», Ե., 1961, էջ 107-108:

Ա. Հ. Մելքոնեան, «Մայիսեան պատմութեան հարցի շուրջ», Ե., 1965, էջ 114:

29.- «Հայաստանի Խորհրդի 1920 թ. Մայիսի 3ի արտակարգ նիստը», Ե., 1920, էջ 7:

30.- Նոյն տեղում, էջ 9:

31.- Նոյն տեղում, էջ 12:

32.- Ա. Դարբինեան, «Հայ ազատագրական շարժման օրերին», Փարիզ, 1947, էջ 436:

դրկովկաս, պահանջեցին, որպէսզի «հայ մուսաւաթը», այսինքն՝ Դաշնակցութիւնը, հեռանայ իշխանութիւնից, եւ Հայաստանն էլ ընդունի խորհրդային վարչաձեւ: Աւելացնենք, որ նոյն ժամանակ Արցախի խեռները, հայ բոլշեւիկների ու մենշեւիկների պէս, հանդէս էին գալիս Արցախը Ադրբեջանին կցելու պահանջով:[33]

Արտախորհրդարանական կուսակցութիւններից, Ադրբեջանի ներկայացրած վերջնագրին ի պատասխան, հայ ազգային կուսակցութիւնների նման, Հայ Սոցիալ-Դեմոկրատ Բանոտրական («սպեցիֆիկների») կուսակցութեան Երեւանի կոմիտէն Մայիսի 3ին հրատարակեց կոչ, որում բողոքում ու դատապարտում էր խորհրդայնացուած Ադրբեջանի յանդուգն ու սպառնալից պահանջը՝ երեք օրուայ ընթացքում Ղարաբաղն ու Զանգեզուրը մաքրելու վերաբերեալ:[34]

Խորհրդարանական քննարկումների արդիւնքում ընդունուեց համապատասխան որոշում: Հ.Յ.Դ. խմբակցութեան կողմից Յովակիմ Բուդաղեանը առաջարկեց հետեւեալ բանաձեւը.- «Լսելով արտաքին գործոց նախարարին Ադրբեջանի կառավարութեան վերջնագրի եւ նախարարի պատասխանի մասին՝ խորհրդարանը հաւանութիւն է տալիս տրուած պատասխանին եւ հրահանգում է կառավարութեանը ինքնապաշտպանութեան բոլոր միջոցները ձեռք առնել ապահովելու հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը եւ ազատ հայրենիքի անկախութիւնը»:[35]

Խորհրդարանը 33 ձայներով, ընդդէմ 4ի, ընդունեց Հ.Յ.Դ. խմբակցութեան կողմից առաջարկուած բանաձեւը:

Խ. Ադրբեջանի եւ Կարմիր Բանակի հրամանատարութեան վերջնագրերին շուտով յաջորդում են գործնական քայլեր: Ղարաբաղ են շարժւում մեծ քանակութեամբ ադրբեջանցի եւ ռուս զօրքեր:[36]

Ադրբեջանի խորհրդայնացումը, փաստօրէն, կանխում է Ղարաբաղի Հայաստանին միացման ու ամրապնդման հետագայ գործընթացը: Տեղի հայութիւնը, խաբուելով բոլշեւիկներից, ընկնում է նրանց սին խոստումների եւ կարգախօսների ծուղակը: Մայիս ամսին խորհրդայնանում է Արցախը: Մայիսի վերջերին (26ին) Դրօն հարկադրուած իր զօրամասով Արցախից վերադառնում է Զանգեզուր եւ ապա յետոյ՝ Դարալագեազ: Սահմաններ ու հայրենիք չճանաչող բոլշեւիկները աւելի ուշ (1921 թ. Յուլիսին) Արցախի հարցը լուծում են Ադրբեջանի օգտին:

*

* *

Այսպիսով, Հայաստանի Առաջին Հանրապետութեան պետականիրաւական կառոյցի անբաժան մասն է կազմել խորհրդարանը, որը ձեւաւորելիս հաշուի էր առնուել պառլամենտարիզմի համաշխարհային փորձը: Այդ նոյն ժամանակ արդէն քաղաքական պայքարի բաւական դաժան դպրոց էին անցել հայ քաղաքական կուսակցութիւնները, որոնք իրենց գործունէութեամբ պէտք է միս ու արիւն ջամբէին հայ իրականութեան մէջ առաջին անգամ ձեւաւորուած խորհրդարանին:

Հայաստանի խորհրդարանի եւ քաղաքական կուսակցութիւնների գործունէութեան ուսումնասիրութիւնը հիմք է տալիս յանգելու այն եզրակացութեան, որ իր առանձին թերութիւններով ու անխուսափելի բացթողումներով հանդերձ, իրաւաքաղաքական ու տնտեսական տեսակէտից Հ.Հ.Ն իրենից ներկայացնում էր հիմնականում ժողովրդավարական տիպի հանրապետութիւն: Այնտեղ առկայ է եղել պետականութիւն իր անկապտելի բոլոր յատկանիշներով, մի պետականութիւն, որն արգասիք էր հայ ժողովրդի նիւթական, հոգեւոր ու ֆիզիկական թափած ջանքերի: Հէնց այդ հիման վրայ էլ հաստատապէս հերքւում է խորհրդահայ պատմագրութեան մէջ եւ Սփիւռքի քաղաքական որոշ շրջանակներում տարածում ստացած ժխտական (նիհիլիստական) ու հեգնական վերաբերմունքը Հայաստանի Առաջին Հանրապետութեան նկատմամբ:

Իր թերութիւններով ու անկատարութեամբ, ժողովրդի կրած զրկանքներով ու կորուստներով հանդերձ՝ Հայաստանի Հանրապետութիւնն, անկասկած, իր արժանի տեղը պէտք է գրաւի հայ ժողովրդի բազմադարեան ու մասնաւորապէս Հայոց անկախ պետականութեան պատմութեան հոլովոյթում:

■

Իր թերութիւններով ու անկատարութեամբ, ժողովրդի կրած զրկանքներով ու կորուստներով հանդերձ՝ Հայաստանի Հանրապետութիւնն, անկասկած, իր արժանի տեղը պէտք է գրաւի հայ ժողովրդի բազմադարեան ու մասնաւորապէս Հայոց անկախ պետականութեան պատմութեան հոլովոյթում:

33.- Հ.Հ. Պ.Կ.Պ.Ա., ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 52:

34.- Հ.Հ. Հ.Ք.Կ.Փ., ֆ. 1022, ց. 7, գ. 69, թթ. 1-2:

35.- «Հայաստանի պառլամենտի 1920 թ. Մայիսի 3ի արտակարգ նիստը», Ե., 1920, էջ 19: «Յառաջ», 8 Մայիսի 1920, Հ.Հ. Պ.Կ.Պ.Ա., ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 35:

36.- Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Բէյրութ, 1958, էջ 446: